

«Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում»
համայնքային հիմնարկ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի
աղբահանության տեխնիկական միջոցների
վերազինման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝
«Բնակավայր» ՍՊԸ տնօրեն՝
Ս. Թևոսյան



Աշտարակ – 2025

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	4
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	8
2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները _____	8
2.2. Կլիմա _____	8
2.3. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները _____	12
2.4. Տարածքի սելսմիկ բնութագիրը _____	13
2.5 Մթնոլորտային օդ _____	13
2.6 Ջրային ռեսուրսներ _____	14
2.7 Հողային ռեսուրսներ _____	15
2.8 Կենսաբազմազանություն _____	15
2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	15
2.10. Պատմության և մշակութային հուշարձաններ _____	16
2.11. Սոցիալ տնտեսական պայմանները _____	20
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	22
3.1. Ընդհանուր տեղեկատվություն _____	22
3.2. Իրավական կարգավորումները _____	23
3.3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ _____	24
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 26	
4.1. Մթնոլորտային օդ _____	26
4.1.1. Դիզելային վառելիքի այրման արգասիքները _____	27
4.1.2. Գազային վառելիքի այրման արգասիքները _____	28
4.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա _____	30
4.3. Աղմուկ և թրթռում _____	30
4.4. Հողածածկ _____	30
4.5. Երթևեկություն _____	30
4.6. Կենսաբազմազանություն _____	30

4.7.	Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները	31
4.8.	Առողջապահական գործոններ	31
4.9.	Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն	31
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ	32
6.	ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	33
6.1.	Ընդհանուր դրույթներ	33
6.2.	Մթնոլորտային օդ	34
6.3.	Ջրային ռեսուրսներ	34
6.4.	Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը	34
6.5.	Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ	36
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	36
7.1.	Բնապահպանական կառավարման պլան	36
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	38
7.2.	Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը	40
7.3.	Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը	40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ներկայացվող գործունեության շրջանակներում «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում իրականացնում է կոշտ կենցաղային աղբի հավաքում և տեղափոխում Սասունիկի աղբավայր: Այս գործունեությունը իրականացվել է տասնամյակներ ի վեր, սակայն գործունեության համար օգտագործվող տեխնիկական միջոցները հնացել են և համայնքապետարանը որոշում է կայացրել վերազինել տեխնիկական պարկը՝ գնելով նոր աղբատար մեքենաներ:

Ներկայացվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը (ՇՄԱԳՀ) մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի հիման վրա:

Սույն գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, հասցե՝ Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ, Ն. Աշտարակցու հրապարակ 7:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքները ներկայացված են ստորև.

ՀՀ Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնա-կառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

ՀՀ Ջրային օրենսգիրք (2002)

Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենսգրքից բխող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Օրենսգիրքը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

ՀՀ Անտառային օրենսգիրք (2005)

Օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա

միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիթորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիթորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք (2011թ.)

Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները:

«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման» կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարություն 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում, ինչով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության կարգը:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ փոփոխված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Ըստ սույն օրենքի 12-րդ հոդվածի.

3. Ա կատեգորիան ներառում է՝ 6) թափոնների գործածության բնագավառում՝
ա. վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտահանում, մշակում (բացառությամբ կոշտ կենցաղային, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների, շինարարական թափոնների տեսակավորման կամ մեխանիկական եղանակով տարանջատման), վերամշակում, վնասագերծում, տեղադրում կամ թաղում:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) - կարգավորում է.

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական եւ կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

Գործունեությունը կարգավորվում է նաև այլ իրավական ակտերով, որոնցից հիմնականներն են.

- <<**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին**>> ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
- <<**Կենդանական աշխարհի մասին**>> ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
- <<**Բուսական աշխարհի մասին**>> ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,

- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի <<Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին>> N 967-Ն որոշում,

- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին>> N 1059-Ա որոշում,

<<Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N 781-Ն որոշում,

«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր /ընդունված ՀՀ ԱՆ նախարարի 2002թ. մարտի 6-ի N138 հրամանով/:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՌԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Աշտարակի տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմտյան մասում՝ Արագածոտնի մարզում և ընդգրկում է Քասախ գետի միջին հոսանքի հատվածները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից սպասարկվող տարածքը մտնում է Արագած լեռան ստորին լանջերի մեջ: Գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Երևան քաղաքից 13 կմ հյուսիս-արևմուտք:

2.2. Կլիմա

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը կազմում է 25.2°C: Առավելագույն

ջերմաստիճանը հասնում է 41.2°C և ավելի: 10°C -ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը 180-ից 200 է: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը կազմում է -3.2°C :

Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -24.5°C -ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս:

Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը կազմում է 48:

Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:

Լեռնային երկրների հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության:

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	-3.2	-0.1	5.8	11.7	16.5	21.5	25.2	25.2	20.5	13.6	6.2	-0.2	11.9	-24.5	41.2

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Աշտարակ	79	71	64	64	64	57	54	54	57	66	72	80	65	79	72	54	44

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը	
	Ըստ ամիսների													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	27	30	36	55	59	33	20	11	13	34	29	30	377	152	225
	24	24	28	39	45	30	45	22	32	43	40	20	45		

Աղյուսակ 2.4. Ձյան ծածկույթ Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

	Ձյան ծածկույթը			
Բնակավայրի անվանումը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Աշտարակ	55	48	198	70

Աղյուսակ 2.5. Քամու պարամետրերը Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրերի	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-նոյեմբեր	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձետրվար	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Աշտարակ	Հունվար	4	21	22	11	16	12	10	4	-	2.0	Արլ	3.3	Արլ	2.2
		1.6	2.0	2.2	2.3	2.0	1.8	2.0	2.1						
	Ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	-	2.7				
		3.7	2.8	2.6	2.8	2.8	2.7	2.9	2.8						
	Հուլիս	4	26	23	11	12	11	9	4	-	32				
		4.4	3.5	3.3	3.2	3.2	2.6	2.7	3.2						
	Հոկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	-	2.2				
		1.7	2.1	2.3	2.4	2.3	2.1	2.1	2.2						

2.3. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Աշտարակի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են Չորրորդականի հասակի լավաները, որոնք հիմնականում մերկանում են Քասախ գետի կիրճում, մնացած հատվածներում նրանք ծածկված են ոչ մեծ հզորության ժամանակակից առաջացումներով, որոնք ներկայացված են ավազակավերով, կավավազներով, խճային գրունտներով և գետի հունային մասերում գլաքարաձալաքարային նստվածքներով

Համաձայն գրականության նյութերի տվյալների՝ (նախկինում կատարված ուսումնասիրման հիման վրա) Աշտարակի տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտները՝ վերնից-ներքև:

Շերտ-1 խճային գրունտ խճավազի պարունակությամբ տեղ-տեղ խարամացված բազալտի պարունակությամբ 10-20%: Գրունտը պինդ է, լցոնը՝ շագանակագույն և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (13) IV կարգ է:

Շերտ-2 Բեկորային բազալտ ամուր, մոխրագույն, կապտամոխրագույն, ծակոտկեն տեղ-տեղ խոռոչավոր ճեղքավորված: Շերտում լցանյութը կավավազային է 10-15%: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (6ա) V I կարգ է:

Շերտ-3 Տուֆ կարմրից սև գույնի: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (37) V կարգ է:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, որը հանդիսանում է մթնոլորտային տեղումների հիմնական մասի տեղափոխումը ճեղքավորված լավաների միջոցով դեպի արարատյան ստորգետնյա ջրավազան: Տվյալ տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Համաձայն իրականացված ինժեներաերկրաբանական հետազոտությունների ուսումնասիրվող տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն,

ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

2.4. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում:

Նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀՇՆ 20.04.2020թ. տեղամասը գտնվում է I սեյսմիկ գոտու մեջ՝ Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A , ազատ անկման g արագացման մասերով՝ $A_{max}=0.3g$:

2.5 Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Աշտարակ համայնքի տարածքում «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներների համար նախատեսված հիմնական անշարժ և շարժական

կայաններ տեղադրված չեն, և Աշտարակ քաղաքի օդային ավազանի օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալներ պաշտոնական տեղեկագրերում ներկայացված տվյալներ չկան, հետևաբար տեղեկատվությունը վերցվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքից՝

- ծծմբի երկօքսիդի համար՝ 0.006 մգ/մ խոր.,
- ազոտի օքսիդների համար՝ 0.033 մգ/մ խոր.,
- ածխածնի օքսիդի համար՝ 1.1 մգ/մ խոր.,
- չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.095 մգ/մ խոր.:

2.6 Ջրային ռեսուրսներ

Տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի Ջրավազանային Կառավարման Տարածքը (ՋԿՏ) ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

Հրագրանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Ըստ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ վերջին հրապարակված՝ 2024 թ. I եռամսյակի տվյալների՝ Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), *Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)*, գետաբերանում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

2.7 Հողային ռեսուրսներ

Աշտարակ համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզի Ատարակի տարածաշրջանում պատկանում է չոր տափաստանային բնահողային գոտուն, որտեղ տարածված են շագանակագույն տիպի հողերը, իրենց բազմաթիվ ենթատիպերով: Այս տիպի հողերն ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջին կավավազային են և ունեն հետևյալ առանձնահատկությունները. առաջին՝ հումուսի միջին պարունակությունը 2-4% է, երկրորդ՝ քարքարոտ են, երրորդ՝ աչքի են ընկնում խիստ արտահայտված, մասամբ ցեմենտացված էյուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ, չորրորդ՝ ունեն թույլ հիմնային և հիմնային ռեակցիա (pH 7.4-8.5), հողի կլանունակությունը 30-35 մգ/էկվիվալենտ է և հինգերորդ՝ ունեն անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

2.8 Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Աշտարակ քաղաքի բնակեցված և կառուցապատված գոտում: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը համատարած բնույթ չեն կրում, հանդիպում են տեղ-տեղ: Դրանք բնական չեն, ձևավորվել են կանաչապսակ արդյունքում:

2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

ՀՀ Արագածոտնի մարզում գրանցված է միայն «Արագածի ալպյան» արգելավայրը, որը նշված տարածքից գտնվում է գտնվում է մոտավորապես 40 կմ հեռավորության վրա:

2.10. Պատմության և մշակութային հուշարձաններ

Ստորև ներկայացվում է Աշտարակ քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության N 628 որոշման (ընդունված 29.05.2002թ.).

Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Ծանոթագրություն
5.	6.	7.	9.
ԱՇՏԱՐԱԿ «ՈՒԼԱՏԻՏԻԿ»	4-5դդ.	հվ-աե մասում	համանուն բլրի վրա. Քասախի կիրճի ձախ լանջին, միջնադարյան կամրջի մոտ
ԲԱՂՆԻՔ	1900 թ.	քաղաքի մեջ (այսուհետև՝ ք.մ.)	
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1888 թ.	Աբովյան փող. 22	
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. ՎԴՋ	Ալազանի փող. 19-23	բժիշկ Սանդրոյի
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1910 թ.	Ն. Աշտարակեցու հրապարակ	Վարդազարենց
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1904 թ.	Էմին Հակոբյան փող., 2	Կոկոլենց Աթոյի
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. ՎԴՋ	Ղափանցյան փող., 14	Եսայու
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	19 դ. ՎԴՋ	Ղափանցյան փող., 18	
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	20 դ. սկզբ	Ղափանցյան փող., 20	Սիրեկանի
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1837 թ.	Սաժումյան փող., 1	Թաթոսենց Թաթոյի
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1895 թ.	Սաժումյան փող., 12	Հաջի աղայի
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ	1896 թ.	Սաժումյան փող., 34	Բեգլարենց
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-20 դդ.	հս-աե մասում	Քաղաքի եզրին, Ապարան տանող ճանապարհի աջ կողմում
խաչքար	9-10 դդ.		հվ մասում
խաչքար	11-12դդ.		Ա. Խաչատրյանի հողամասում
խաչքար	11-12դդ.		Ա. Խաչատրյանի հողամասում
խաչքար	13դ.		որմնափակ, վրնրգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
խաչքար	13դ.		որմնափակ, վրնրգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
խաչքար	13դ.		որմնափակ, վրնրգ 1954 թ., ճարտ.՝ Շ. Ազատյան
խաչքար	13դ.		Ա. Խաչատրյանի հողամասում
խաչքար	13դ.		աե մասում, ստորին մասը կոտրված
խաչքար Գրիգոր և Վարդոսան ամուսինների	1225 թ.		աե մասում, քառաստիճան պատվանդանին

խաչքար Սադուն իշխանի և նրա զավակների («Ծակքար»)	1268 թ.		
խաչքար Գրիգորի, Նազի, Սետայի	1273 թ.		եռաստիճան պատվանդանին
խաչքար Վերգինի	1461 թ.		կնտ.-ական մասում, հենած տապանաքարի, ստորին մասը չի պահպանվել
խաչքար Կարապետին	16-17 դդ.		հս-ամ մասում, քիվը՝ ջարդոտված, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից ձախակողմյանը
խաչքար Վիրապի, Մկրտչի	16-17 դդ.		հս-ամ մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից կենտրոնականը
խաչքար Գուլիշի, Շնահրի	1602 թ.		հս-ամ մասում, կանգնեցված եռաստիճան բարձր պատվանդանին. 3 խաչքարերից աջակողմյանը
խաչքար Ուքանի	1631 թ.		հվ-ամ մասում, քիվի վերին աջ անկյունը՝ կոտրված
տապանաքար	1598 թ.		
տապանաքար Բաբելի	1757 թ.		
տապանաքար Եղսանի	1771 թ.		
տապանաքար	1781 թ.		
տապանաքար Հարությունի	1791 թ.		
տապանաքար Տեր Հարություն Շահազիզյանի (Աշտարակեցու)	1801 թ.		Ներսես Աշտարակեցու հոր տապանաքարն է:
ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ «ԽՈՋԱԲԱՂԵՐ»	մթա 2 հզմ	հս-աե մասում	
ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԿԱՐՄԱՎՈՐ)	7 դ.	հս-աե մասում	
գերեզմանոց	7-19 դդ.		եկեղեցու բակում
խաչքար	11 դ.		եկեղեցու բակում, ընկած գետին, ստորին ձախ անկյունը՝ կոտրված
խաչքար «Հազախաչ»	12 դ.		եկեղեցու պարսպի հվ-ամ մուտքի ձախ կողմում, քառաստիճան պատվանդանին. արձանագիր
խաչքար Թագուհու	1184 թ.		երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից

			կենտրոնականը կազմող՝ Արքա
խաչքար	12-13 դդ.		երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից ձախակողմյանը
խաչքար	12-13 դդ.		երկաստիճան պատվանդանին կանգնեցված 3 խաչքարերից աջակողմյանը
խաչքար	13 դ.		թերի
խաչքար	15 դ.		
խաչքար Ասադինին, պարոն Դալին	16 դ.		եկեղեցու բակում, կանգնեցված բարձր պատվանդանին, կազմող՝ Սարգիս
խաչքար	16 դ.		եկեղեցու պարսպի տակ
խաչքար Հովսեփի	1598 թ.		եկեղեցու պարսպի տակ, կազմող՝ Հրայկետ
խաչքար Մկրտիչ վարդապետ Շահագիզյանի	1832 թ.		եկեղեցու պարսպի տակ, վերին ձախ և ստորին աջ անկյունները՝ կոտրված
տապանաքար	1811 թ.		պարսպի հվ մուտքից ձախ
գերեզման Գևորգ Էմինի	1998 թ.		ճարտ.՝ Հ. Սողախյան
պարիսպ	1254 թ.		
ԵԿԵՂԵՑԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ	5 դ.	ք.մ., Բերդաթաղում	կիրճի եզրին, կիսավեր
կոթող	7 դ.		բեկոր՝ հենած հվ պատին
կոթող	7 դ.		բեկոր՝ եկեղեցու հվ-աե անկյունում
կոթող	7 դ.		բեկոր
կոթող	7 դ.		եկեղեցուց 4 մ աե
խաչքար	11-12 դդ.		եկեղեցու ներսում, հենած պատին
խաչքար	13 դ.		բեկոր, եկեղեցու ներսում
տապանաքար	1701 թ.		հվ պատի շարվածքում
ԵԿԵՂԵՑԻ Ս. ՄԱՐԻՆԵ	1281 թ.	ք.մ.	բարեկարգված 1977 թ., նախագծի ճարտ.՝ Գ.Գյուրջյան
գերեզմանոց	17-19 դդ.		եկեղեցու ամ կողմում
խաչքար	1291 թ.		եկեղեցու բակում, երկաստիճան պատվանդանին

ԵԿԵՂԵՑԻ Ս.ԱԱՐԳԻՍ	13 դ.	հվ-աե մասում	վրկնգ.՝ 1985 թ., ճարտ.՝ Հ.Գասպարյան
գերեզմանոց	15-19 դդ.		եկեղեցու շուրջը
պարիսպ	15 դ.		
խաչքար	16-17 դդ.		եկեղեցու ներսում, արձանագիր, կոտրված
քարայր-կացարան	16-17 դդ.		եկեղեցուց 20 մ հվ-ամ
քարայր-կացարան	16-17 դդ.		եկեղեցուց 15 մ հվ-ամ
քարայր-կացարան	16-17 դդ.		եկեղեցուց 25 մ հվ-աե
քարայր-կացարան	16-17 դդ.		եկեղեցուց 10 մ հվ
ԵԿԵՂԵՑԻ ՍՊԵՏԱԿԱՎՈՐ	13 դ.	ք.մ., Բերդաթաղում	կիրճի եզրին, կիսավեր
ԿԱՄՈՒՐՋ	10 դ.	աե մասում	
ԿԱՄՈՒՐՋ	1664 թ.	աե մասում	պատվիրատու՝ մահտեսի խոջա Գրիգոր
ՀՆՁԱՆ	19 դ.	հվ-ամ մասում	Աշտարակ-Օշական խճուղուց ձախ, Մինասի Մացակայի հողամասում
ՀՆՁԱՆ	19 դ.	հս-ամ մասում	Աշտարակ-Օշական խճուղուց աջ. Ղազիկենց հողամասում
ՀՈՒՇԱՍՅՈՒՆ՝ ԱՐՏԵՄԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ	1990 թ.	Ն. Միսակյան փող.	
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1974 թ.	ք.մ.	ճարտ.՝ Վ. Թասլակյան
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԻՍԱԿՅԱՆԻ	1987 թ.	Ն. Միսակյան փող.	ճարտ.՝ Գ. Գյուրջյան. քանդ. Ա. Ավագյան
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՎԱՆԻ 1915 թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ	1980 թ.	ամ մասում	քաղաքի ամ եզրին, Աշտարակ-Թալին մայրուղու ձախ կողմում, ճարտ. Ջ. Թորոսյան
ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	19 դ. վրջ	Աբովյան փող., 2	միջնադարյան կամրջի մոտ, վրկնգ.՝ 1983 թ., ճարտ.՝ Գ. Գյուրջյան
ԶՐԱՆՅՔ «ՄԱՅՐ ԱՌՈՒ» («ԱԿԱՆԱՏԵՄԻ ԱՌՈՒ»)	մթա 8-7 դդ.	աե մասում	
ՏԱՊԱՆԱՔԱՐ «ՆԱՀԱՏԱԿԻ»	1751 թ.	0,5 կմ աե	Քասախի կիրճում, «Դարաքավոր» այրերի մոտ. Քասախի աջակողմյան դարավանդին
ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔ. ՊԵՐՃ ՊՈՌՇԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ	19 դ., 1948 թ.	Պոռչյան փող., 10	վրկնգ.՝ 1986 թ.
հուշարձան Պերճ Պոռչյանի	1948 թ.		տուն-թանգարանի բակում, քանդ.՝ Ա. Ատեփանյան

ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔ. ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ	19 դ. վրջ	Ղափանցյան փող., 25	վրկնգ.՝ 1989 թ.
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ «ՎԵՐԻՆ ՆԱՎԵՐ»	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից մոտ 2.5 կմ ամ, Աշտարակ-Գյումրի ճանապարհից 20-30 մ հվ	Փարպի գյուղի «Վերին Նավեր» դամբարանադաշտի (պետ. ցուցակ՝ 2.110.2) աե հատվածի մեծ դամբանաբլուրներն են
ՀՆՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	4-13 դդ.	քաղաքի հս-աե մասում, «Հնձանաբազեր» վայրում	պեղվել է 4 հնձան
ՔԱՐԱՅՐ- ԿԱՅԱՐԱՆՆԵՐ «ԴԱՐԱԲԱՎՈՐ»	միջնադար	Քասախի կիրճում	համալիրի մաս կազմող «Նահատակի» տապանաքարը պետ. ցուցակում ներկայացված է իբրև առանձին հուշարձան(2.1-30)

2.11. Սոցիալ տնտեսական պայմանները

Արագածոտնի մարզը գտնվում ՀՀ տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, իսկ արևմուտքում պետական սահմանով՝ Թուրքիային:

2023թ.-ին (վերջին հրատարակված տարեգիրք) Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.2 %,
- գյուղատնտեսություն 9.9 %,
- շինարարություն 2.9 %,
- մանրածախ առևտուր 1.8 %,
- ծառայություններ 0.8 %:

Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են: Արդյունաբերության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում մարզի տնտեսաաշխարհագրական դիրքը՝ հարևանությունը մայրաքաղաքին, Արմավիրի և Կոտայքի մարզերին: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և խմիչքների, ըմպելիքների թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Մարդ:(մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Բնակլիմայական պայմանների բազմազանության պատճառով մարզն առանձնանում է գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման տարբերություններով:

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան – Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր – Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը հատում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Համայնքի բնակչությունը ըստ Աշտարակի համայնքաօժետարանի պաշտոնական կայքի կազմում է՝ 78208 մարդ:

Աշտարակ քաղաք¹

Մարզկենտրոն Աշտարակ քաղաքը

(2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 25107 մարդ) գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 1075մ բարձրության վրա:

Քաղաքը հանգուցակետ է ավտոմոբիլային ճանապարհների խաչմերուկում, որը կապում է ՀՀ կենտրոնը հյուսիսային և հարավային տարածքների հետ: Այն գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում:

Աշտարակ քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է:

Քաղաքի տնտեսության առաջատար ոլորտը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

Համայնքի վարչական տարածքը՝ 42.332 քառ.կմ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 6664:

Կենսաթոշակառուների թիվը՝ 3805:

¹ <https://www.armstat.am/>
<https://ashtarak.am/>

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Աղբահանությունը կատարվում է համայնքի բոլոր բնակավայրերում տեղադրված աղբամաններից և աղբարկղերից: Ստորև բերված է համայնքի բնակավայրերի ցանկը և այդ բնակավայրերում առաջացող աղբի մոտավոր քանակները.

Աղյուսակ 3.1. Բնակավայրերի ցանկը և աղբի մոտավոր ծավալները

№	Բնակավայր	Աղբի մոտավոր օրական ծավալը, մ³
1	Աշտարակ	70 - 72
2	Ագարակ	1.5 – 2.0
3	Աղձք	0.6 – 0.8
4	Անտառուտ	0.5 – 0.6
5	Ավան	0.5 – 0.6
6	Արագածոտն	1.2 – 1.4
7	Արուճ	0.8 – 1.0
8	Արտաշավան	1.0 -1.2
9	Բազմաղբյուր	0.7 – 0.8
10	Բյուրական	1.2 – 1.4
11	Լեռնարոտ	0.8 – 1.0
12	Կարբի	1.2 – 1.5
13	Կոշ	1.2 – 1.5
14	Ղազարավան	0.7 – 0.8
15	Նոր Ամանուս	0.8 – 0.9
16	Նոր Եղեսիա	1.2 – 1.4
17	Նոր Երզնկա	1.0 – 1.2
18	Ոսկեհատ	1.2 – 1.4
19	Ոսկեվազ	1.5 – 1.8
20	Սաղմոսավան	1.2 – 1.4
21	Սասունիկ	1.0 – 1.2
22	Տեղեր	0.6 – 0.8
23	Ուշի	1.0 – 1.2
24	Ուջան	1.5 – 1.8
25	Փարպի	1.2 – 1.5
26	Օհանավան	1.5 – 2.0
27	Օշական	1.8 – 2.0

Բնակավայրերում աղբը հավաքվում է աղբարկղերում և ըստ կուտակման տեղափոխվում է աղբավայր: Աղբի հավաքման որոշակի ժամանակացույց չկա: Աղբի կանոնակարգված տեսակավորում չի կատարվում, սակայն բնակիչներից ոմանք փաստացի առանձնացնում և հանում են մետաղների, որոշ պլաստիկ իրերի և մի քանի այլ մնացորդներ:

3.2. Իրավական կարգավորումները

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի.

«աղբահանություն՝ գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում, պահում, փոխադրում եւ տեղադրում աղբավայրում, այդ թվում՝ դրանց տեսակավորում ու փոխադրում աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման եւ վնասագերծման նպատակով»:

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված գործունեությունը ներառում է միայն՝ «գոյացող աղբի, ինչպես նաև շինարարական ու խոշոր եզրաչափերի աղբի հավաքում և փոխադրում», առանց՝ «դրանց տեսակավորման ու փոխադրման, աղբի վերաօգտագործման, օգտահանման, վերամշակման եւ վնասագերծման» գործընթացների:

Աղբահավաքման գործընթացները կանոնակարգվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի հետևյալ սկզբունքների.

- Համայնքի աղբահանության եւ սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին.
- Աղբի փոխադրումն իրականացվում է դրա համար նախատեսված հատուկ մասնագիտացված տեխնիկայի եւ համապատասխան անձնակազմի միջոցով՝ սանիտարափոխանակ կանոններին եւ նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան.
- Շինարարական, խոշոր եզրաչափերի, օգտահանման եւ վերամշակման ենթակա աղբը փոխադրվում է առանձին-առանձին՝ սահմանված նորմերին ու կանոններին համապատասխան.
- Աղբամաններում արգելվում է տեղադրել կամ պահել արտադրական թափոնները, էլեկտրոնային եւ էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնները, սնդիկ պարունակող լամպերը եւ այլ արտադրանք, էլեկտրական կուտակիչները եւ մարտկոցները, անվադողերը, այրվող, շիկացած կամ տաք աղբը, բժշկական թափոնները, խոշոր եզրաչափերի աղբը, ձյունը եւ սառույցը, հեղուկ թափոնները, ինչպես նաև այլ վտանգավոր թափոններ, որոնք կարող

են վնաս հասցնել աղբահանություն կատարող անձանց կյանքին եւ առողջությանը:

Ներկայում «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ունի աղբի փողադրման լիցենզիա, սույն նախաձեռնության արդյունքում ընկերությունը կդիմի հավաքման լիցենզիա (ներդիր) ստանալու համար:

3.3. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը

3.3.1. Գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակ

Տվյալ իմաստով գործունեություն հասկացվում է տեխնիկական միջոցների վերազինում, քամի որ աղբահավաքումը կիրականացվի ամեն դեպքում:

Ջրոյական տարբերակի դեպքում նոր աղբատար մեքենաներ չեն գնվի, կշարունակվեն շահագործվել հին մեքենաները, որի արդյունքում հավանական են բազմաթիվ խափանումներ, աղբի անկանոն տեղափոխման դեպքերի ավելացում, մեքենաների սպասարկման բարձր ծախսեր, վառելիքի գերնորմատիվային օգտագործում և համապատասխանաբար արտանետումների աճ:

3.3.2. Քննարկվող տարբերակները

Տեխնիկական միջոցների արդիականացման համար, որպես տարբերակներ, քննարկվել են տարբեր ընկերությունների արտադրության և տեխնիկական հնարավորությունների աղբատար մեքենաների գնման հնարավորությունները:

Ուսումնասիրվել են շուկայում առկա առաջարկությունները և ելնելով համայնքի ֆինանսական հնարավորությունները ընտրվել են աղբատար մեքենաներ ՄԱԶ (ՄԱԶ) բեռնատար մեքենաների հիմքի վրա, որոնք մասամբ արդեն իսկ օգտագործվում են Աշտարակի աղվահավաքման համար և դրական են դրսևորել իրենց:

Ցանկացած ընտրության իրականացման դեպքում շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա ազդեցության, բնական ռեսուրսների, պայմանների փոփոխություններ չեն լինի:

Քննարկվել է նաև աղբի տեսակավորման հարցը, սակայն հաշվի առնելով ֆինանսական միջոցների բացակայությունը, այդ տարբերակը ներկա փուլում, ինչպես նաև մոտակա տարիներին, չի կարող իրականացվել:

3.4. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Աշտարակ համայնքում աղբահանությունը իրականացվում է «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ կողմից, որն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և մասնագիտացված անձնակազմ:

Աղբի հավաքումը իրականացվում է Աշտարակ համայնքի 29 բնակավայրերում տեղադրված տարբեր չափերի շուրջ 300 աղբամաններից և աղբարկղերից:

Ընկերությունը աղբի հավաքման համար տվյալ պահին օգտագործում է առկա 29 տեխնիկական միջոցները՝ աղբահավաք մեքենաներ, ինքնաթափ բեռնատար մեքենաներ:

Ընկերության անձնակազմը բաղկացած է 95 հոգուց:

Տարեկան աշխատանքային օրերի և ժամերի թիվը՝ 310 օր/տարի, 8 ժամ/օր:

Աղբի օրական հավաքվող և տեղափոխվող քանակները -105 խմ:

Հատուկ ժամանակացույց բնակավայրերի համար չկա: Աղբի հավաքումը կատարվում է ըստ աղբի կուտակման մասին տեղեկատվության:

Աղբը աղբամաններից բարձվում է աղբատար մեքենաների մեջ և անմիջապես տեղափոխվում է Սասունիկի աղբավայր:

Սասունիկի աղբավայրը 30.12.2022թ. ստացել է թիվ 0201-22 դրական փորձաքննական եզրակացություն, այն շահագործվում է «Էկո կենտրոն» ՍՊԸ կողմից և սույն ՇՄԱԳ հաշվետվության առարկա չէ:

Աղբի հավաքման ժամանակ տեղում իրականացվում է նաև աղբամանների շրջակայքում թափված աղբը: Անհրաժեշտության դեպքում կատարվում է աղբամանների ախտահանում հատուկ փրփռային նյութերով՝ որպիսի չառաջանա արտահոսք:

Վերազինման շրջանակներում նախատեսվում է փոխարինել բոլոր հնացած և աղբահավաքման համար հատուկ հանգույցով չհամալրված մեքենաները:

Ստորև բերված են ներկայում շահագործվող մեքենաների ցանկը, դրանց մակնիշները և փոխարինվող տեսակները:

Աղյուսակ 3.2. Գործող և նախատեսվող տեխնիկական միջոցները

№	Առկա մեքենաների մակնիշը	Քանակը, հատ	Բնութագրերը	Վերազինում
1	ГАЗ - 53	8	Բեռնատար, առանց աղբի բեռնման հանգույցի	MA3, աղբի բեռնման հանգույցով
2	MA3	9	աղբի բեռնման հանգույցով	-
3	ЗИЛ	8	Բեռնատար, առանց աղբի բեռնման հանգույցի	MA3, աղբի բեռնման հանգույցով
4	ЗИЛ	1	Զրքան	-
5	MA3	1	Զրքան	-
6	Տրակտոր	1	Օժանդակ	-
7	Տրայլեր	1	Օժանդակ	-

Այսպիսով նախատեսվում է գնել 16 հատ MA3 մակնիշի աղբատար մեքենաներ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աղբահանության ընթացքում ազդեցությունը կապված է աղբամանների և աղբարկղների սպասարկման, աղբի բարձման և տեղափոխման ժամանակ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման աշխատանքների հետ:

4.1. Մթնոլորտային օդ

Աղբավայրի շահագործման ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման արդյունքում առաջացող արտանետումներով:

Աղբահավաքումը կատարվում է 29 աղբահավաք մեքենաների միջոցով: Որպես վառելիք այս տրանսպորտային միջոցներն օգտագործում են գազ և դիզելային վառելիք, ընդ որում հիմնականում գազ:

4.1.1. Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի² հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 4.1-ում:

Աղյուսակ 4.1. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՅՕՄ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ հանքում օգտագործվում են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Աղբահավաքման ընթացքում 2023թ. դիզավառելիքի ծախսը կազմել է՝ 41400 լ: Սույն հաշվարկներում օգտագործվել է առավելագույն հնարավոր ծախսի ցուցանիշը՝ 45000 լ կամ՝ $45000 \text{ լ} \times 0.85 \text{ կգ/լ} = 38250 \text{ կգ}$:

Դիզելային վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 4.2-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 4.2. Դիզավառելիքի այրման արտանետումները

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/տարի
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	1.39
	C _x H _y	8.4	0.32
	NO _x	42.3	1.62
	ՊՄ	4.3	0.164

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

² Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ եմիշոնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

$$ESO_2 = 2 \sum ksb, \text{ որտեղ } \backslash$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 38.25 տ/տարի

$$SO_2 = 2 \times 38.25 \times 0.002 = 0.153 \text{ տ/տարի:}$$

4.1.2. Գազային վառելիքի այրման արգասիքները

Ֆազային վառելիքի օգտագործման ընթացքում առաջացող արտանետումների հաշվարկները կատարվել են ըստ CORINAIR մեթոդակարգի տեսակարար գործակիցների: Ըստ այդմ.

$$K_{CO} = 3.98 \text{ գ/կգ վառելիք,}$$

$$K_{NO_x} = 9.67 \text{ գ/կգ վառելիք:}$$

Աղբահավաքման ընթացքում 2023թ. գազային վառելիքի ծախսը կազմել է՝ 111212 կգ: Սույն հաշվարկներում օգտագործվել է առավելագույն հնարավոր ծախսի ցուցանիշը՝ 120000 կգ:

Գազային վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 4.3-ում:

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ/տարի
CO	3.98	0.478
NO _x	9.67	1.16

Ընդամենը արտանետումների տարեկան առավելագույն քանակները բերված են աղյուսակ 4.4-ում:

Աղյուսակ 4.4. Տարեկան արտանետումները

Վնասակար նյութը	Տարեկար արտանետումը, տ
CO	1.868
C _x H _y	0.32
NO _x	2.78
ՊՄ	0.164

Համաձայն «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման եվ սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ

ներկայացրած իրավաբանական անձանց եվ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշման նորմավորման են ենթակա միայն անշարժ աղբյուրներից արտանետվող վնասակար նյութերը, համապատասխանաբար ցրման հաշվարկները նույնպես կատարվում են անշարժ աղբյուրների համար:

Ներկայացվող գործունեության արտանետումների գնահատումը շրջակա միջավայրի վրա կատարելու համար սույն հաշվետվությունում կատարվել է «օդի պահանջվող օգտագործման» (ՕՊՕ) հաշվարկ, ըստ վերը բերված որոշման հավելվածում առկա եղակակի:

Օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում կամ մեկ վայրկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՕՊՕ տարեկան} = \sum_i^n \frac{U_i}{U_{\theta} \cdot V_i} > 2 \text{ մլրդ. մ}^3 / \text{տարի},$$

որտեղ.

U_i -ն յուրաքանչյուր i -րդ նյութի առավելագույն արտանետումն է համապատասխանաբար մեկ տարում (մգ/տարի կամ մգ/վրկ):

$U_{\theta} \cdot V_i$ -ն i -րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է՝ մգ/լիտր.մ:

Հաշվարկի արդյունքները բերված են 4.5. աղյուսակում:

Աղյուսակ 4.5. ՕՊՕ ցուցանիշները

Արտանետվող նյութը	Արտանետման քանակը, տ/տարի	Միջին օրական $U_{\theta} \cdot V_i$, մգ/մ	ՕՊՕ, մլրդ.մ ³
Ածխածնի օքսիդ	1.868	3	0.623
Ածխաջրածիններ սահմանային	0.32	1	0.32
Ազոտի երկօքսիդ	2.78	0.04	69.5
Մուր	0.164	0.05	3.28
Ընդամենը			73.732

Ընդամենը ՕՊՕ՝ 73.732 մլրդ. մ³/տարի:

Շարժական միջոցների /աղբյուրների/ արտանետումները ցրման հաշվարկի պահանջ և մեթոդաբանությունում ՀՀ-ում չկան:

4.2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա

Աղբամանների և աղբարկղերը պարբերաբար ախտահանվում են փրփռային աղտահանիչներով, որի արդյունքում արտահոսք չի առաջանում: Այլ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի նախատեսվում:

4.3. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող գործունեության ընթացքում թրթռման աղբյուր չի նախատեսվում:

Աղմուկի աղբյուր են հանդիսանալու աղբատար մեքենաները: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղբատար մեքենաների ներդրումը տրանսպորտային երթևեկությունում աննշան է, աղմուկի ազդեցությունը նույնպես կարելի է համարել ոչ էական:

4.4. Հողածածկ

Հաշվի առնելով, որ աղբամանները և աղբարկղերը տեղադրված են բնակավայրերի ասֆալտապատ տարածքներում, հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություն չի սպասվում:

4.5. Երթևեկություն

Ներկայացվող գործունեության ընթացքում աղբատար մեքենաների երթևեկությունը կստեղծի որոշակի ծանրաբեռնվածություն ներհամայնքային ճանապարհներին: Սակայն հաշվի առնելով երթերի միջին օրական թիվը կլինի՝ 30 – 60, այս քանակը չի կարող էապես ազդել ճանապարհների երթևեկության վրա:

4.6. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ ներկայացվող գործունեությունը իրականացվում է բնակավայրերի տարածքներում, բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա չի սպասվում:

4.7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները

Կլիմայի փոփոխություններ առաջացնող գործոնների շարքին են դասվում տրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման ընթացքում առաջացող ածխաթթու գազի արտանետումները: Հաշվարկները կատարվել են ըստ վառելիքի քիմիական բաղադրության, ենթադրելով, որ այն ամբողջությամբ այրվում է:

- Գազային վառելիք՝ 294 տ/տարի
 - Դիզելային վառելիք՝ 121 տ/տարի:
- Ընդամենը՝ 415 տ/տարի:

Հարկ է նշել, որ այս քանակը կազմում է ՀՀ ազխաթթու գազի արտանետումների 0.00667 տոկոսը³

4.8. Առողջապահական գործոններ

Անմիջապես աղբահավաքումը կարող է ազդել բնակչության առողջության վրա միայն կապված աղբամանների ոչ պատշաճ սպասարկման հետ: Միևնույն ժամանակ այս գործունեության հիմնական նպատակը կայանում է բնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը:

4.9. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Ներկայացվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնածին ազդեցության տեսակետից ներկայացվող գործունեությունը հանդիսանում է տրանսպորտային երթևեկության տեսակ և որոշակիորեն ավելացնում է ճանապարհների ծանրաբեռնվածությունը և վառելիքի այրման արտանետումները: Սակայն, ինչպես վեր նշվել է, ազդեցությունը կարելի է համարել աննշան:

³ «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի Հաշվետվություն», 1990-2019թթ.

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Տնտեսական վնասը շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Քանի որ հողային և ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի սպասվում, հաշվարկը կատարվել է միայն վնասակար նյութերի արտանետումների համար:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$U = \sum \Phi_g \cdot \sum \text{Վ}_i \cdot \text{Ք}_i$, որտեղ

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով, $\sum \Phi_g$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի շարժական աղբյուրների համար գործակիցը՝ 5:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մույն կարգի համաձայն $\Phi_g = 1000$ դրամ:

Վ_i -ն i -րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Ք_i -ն տվյալ (i -րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, Ք_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$\text{Ք}_i = q (3 \text{ SU}_i - 2 \text{ ՍԹՍ}_i), \text{SU}_i > \text{ՍԹՍ}_i (2)$

որտեղ՝

ՍԹՍ_i -ն i -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

$\text{Ք}_i = \text{SU}_i$

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1.

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ $U = \sum \Phi_{gi} \cdot \Sigma \varphi_i \cdot P_i$
	Si	q	$\Phi_{gi} = Si \times q$			
Ածխածնի օքսիդ	1.868	3	5.604	1	5	28020
Ածխաջրածիններ	0.32	3	0.96	3.16	5	15168
Ազոտի երկօքսիդ	2.78	3	8.34	12.5	5	521250
Պ.Մ. /մուր/	0.164	3	0.492	41.5	5	102090
Ընդամենը						666528

Հանքավայրի շահագործման արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 666528 դրամ:

6. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Ընդհանուր դրույթներ

Աշտարակ համայնքում աղբի հավաքման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ: Միջոցառումների նկարագրությունը, կատարողները և նախատեսված ծախսերը ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում: Միջոցառումների կատարումը և արդյունավետությունը վերահսկելու կարգը, դրանց կատարման պատասխանատուները և իրականացման ժամկետները ներառված են «Մոնիթորինգի ծրագրի» մեջ:

6.2. Մթնոլորտային օդ

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների կողմից վառելիքի օգտագործման արտանետումներով:

Դիզելային և գազային վառելիքի արտանետումները առաջանում են միայն աղբի հավաքման և աղբավայր տեղափոխման ժամանակ: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի փակ թափքերի կամ դճանց ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի երթերի կանոնակարգում:

6.3. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսված է աղբամանների և աղբարկղերի ախտահանումն իրականացնել փրփոքյին եղանակով:

6.4. Անբարենպաստ պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը

Ելնելով գործունեության բնույթից, աղբի հավաքման ժամանակ վթարային իրավիճակներ չեն սպասվում: Աշխատանքների ժամանակ հնարավոր են բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար օպերատորի կողմից պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակ օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման աղբավայրի շահագործման պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումները՝

I կատեգորիա՝

- խստացվում է աղբի հավաքման և փոխադրման հսկողությունը,

II կատեգորիա՝

- աղբատար մեքենաների երթևեկությունները իրականացվում են հերթով՝ մեկ մեկ:

III կատեգորիա՝

- ժամանակավորապես դադարեցում է աղբի հավաքումը:

Հրդեհային անվտանգություն

Ա. Աղբամաններում կամ աղբարկղերում հրդեհի յուրաքանչյուր բռնկման և հրդեհի հայտնաբերման դեպքում անմիջապես տեղյակ է պահվում մոտակա հրշեջ սառայությունը:

Բ. Հրդեհի ժամանակ անձնակազմը մինչև հրշեջ սառայություն ժամանումը իրականացնում է հրդեհի մեկուսացում մեքենաների վրա տեղադրված կրակմարիչների միջոցով:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ աղբահավաքումը դադարեցվում է, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

6.5. Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ

Աղբի հավաքումն ինքնին լուծում է շատ կարևոր սոցիալական խնդիր՝ աղբի խնդրի լուծում:

Աշտարակ համայնքի աղբի հավաքման և փոխադրման աշխատանքների համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Անձնակազմը ամբողջությամբ հավաքագրված է տեղական բնակչությունից:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1. Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) հանդիսանում է նախատեսվող գործունեության կազմակերպման և իրականացման կարևոր գործիք, այն նախանշում է անհրաժեշտ դիտարկումներ, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել աղբավայրի շինարարության և շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու համար: Պլանում նշվում են հնարավոր ազդեցությունները, դրանց առավել հավանական վայրերը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, վերջիններիս իրականացման պատասխանատուները, ինչպես նաև նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գումարների մոտավոր ծավալները:

ԲԿՊ-ներառում է հետևյալը.

ա/Նախատեսվող գործունեության տեղամասերը և գործընթացները

բ/Պոտենցիալ բնապահպանական ազդեցությունները (ներառյալ սոցիալական, պատմամշակութային ռեսուրսների վրա ազդեցությունը)

գ/Մեղմացնող միջոցառումներ նախապատրաստական, շինարարության և շահագործման փուլերում և գործունեության ավարտի համար

դ/Տարբեր իրավասու կողմերի պարտավորությունները ԲԿՊ- ով նախատեսված բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների իրականացման ընթացքում:

Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է նախատեսվող աղբավայրի բնապահպանական կառավարման պլանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն	Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում	Միջոցառման ծախսերը, հազ.դրամ	Միջոցառման պատասխանատու կամ կատարող
Աղբավայրի շահագործում			
Շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտում	- Թափոնները բեռնել առանց շրջակայքի աղբոտման - Օգտագործել աղբահավաքման համար նախատեսված կոնտեյներներով աղբահանման մեքենաներ, - Պարբերաբար իրականացնել աղբատար մեքենաների ստուգում, շարժիչների կարգաբերում և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգում - Ապահովել բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը հատուկ փրփռային միջոցներով, որոնցից չի առաջանում ջրային արտահոսք - Աղբամանների և աղբարկղերի ախտահանումը կատարել հատուկ ախտահանիչ փրփուռների միջոցով,	Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր 120.0 80.0	Աշտարակի համայնքապե- տարան
Աշխատանքի անվտանգություն	- Սպասարկող անձնակազմին ապահովել անհատական պաշտպանման միջոցներով, իրականացնել անձնակազմի ուսուցում աշխատանքի անվտանգության հարցերով - ապահովել աշխատակիցների սննդի ընդունման և հանգստի պայմանները - Մշակել արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը, որը պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցների համար	60.0 Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր	Աշտարակի համայնքապե- տարան
Սոցիալական ազդեցություն	Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ բնակավայրերի ղեկավարության և բնակիչների հետ՝ ներկայացնելով աղբահանության խնդիրները և նախատեսվող միջոցառումները	Ընթացիկ ծախսեր	Աշտարակի համայնքա- պետարան

<i>Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցություն</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական մեղմացման միջոցառում</i>	<i>Միջոցառման ծախսերը, հազ.դրամ</i>	<i>Միջոցառման պատասխանատու կամ կատարող</i>
	- Փակցնել և կիրառել մեքենաների արագության սահմանափակումներ մեքենաների երթևեկությունից առաջացող փոշու նվազեցման համար, - Մշակել երթևեկության կառավարման պլան երթևեկության սահուն հոսքը և երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով,		

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 260.0 հազար դրամ/տարի:

Բնապահպանական ծախսերի առանձնացումը կրում է պայմանական բնույթ, քանի որ ադրի հավաքման նպատակը ամբողջությամբ կրում է բնապահպանական և սոցիալական բնույթ:

7.2. Մշտադիտարկումների /մոնիթորինգի/ նպատակը

Աղբի հավաքման ընթացքում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

7.3. Մոնիթորինգի տեխնիկական նկարագրությունը

Աշտարակ համայնքի աղբի հավաքման ընթացքում մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Օդերևութաբանական տվյալների մոնիթորինգ՝ օդերևութաբանական - կլիմայական տվյալները պետք է որոշվեն մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի կողմից:
2. Մեքենաների սարքին վիճակի մասին տեղեկատվությունը ստուգվում է դրանց վերանորոգման կամ կարգաբերման մասին մատյաններում կատարված գրառումների միջոցով
3. Աղբամանների և աղբարկղների տարածքում սանիտարական իրավիճակը վերահսկվում է տեղային այցերի միջոցով:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՈՅԻԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործունեության նկարագրության համար օգտագործվել են հետևյալ ելակետային նյութերը.

- Աշտարակ համայնքի ավագանու որոշումները
- Աշտարակի համայնքապետարանի հրամանները և առաջարկությունները
- «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից տրամադրված հաշվետվությունները, ծրագրերը, պարզաբանումները
- Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստուղման փաստաթղթերը
- Աշտարակ համայնքի պաշտոնական կայքէջի նյութեր:

Ներկայացվող վերազինման գնահատման և հաշվետվության կազմման ընթացքում հիմնական խոչընդոտները կապված են եղել փոքր բնակավայրերում աղբի քանակների և դրանց տեղափոխման վերաբերյալ տեղեկատվության պակասի հետ:

Աշտարակ քաղաքի տարածագնահատման գոտիներ

